

# Տ Ի Փ Տ Ի Կ Ո Ն

Կ Ա Մ

ՅԻՇԱՏԱԿԱԳԻՐԻՔ ԵԿԵՂ, ԵՑԻՈՅ (\*)

Եթէ յաւերժական և անմահ յիշատակութեան տենչ բնաւորական ինչ իցէ ՚ի կիրս մարդկան ազգի՝ անկեալ յարարչաինամ Տեսչութենէն, զայն աւանիկ որ ՚ի վաղ ժամանակաց անտիկացին հրաշակերտք, եւ անմահութեան հետախնդիր հոյակապից արանցըն արարք՝ բաւականութեամբ ուրեմն մեզ լուսաբանեն:

Քանզի է՛ր աղագաւ արդեօք Բարիչոնին այն երկնաշերձ ամբարտակ ՚ի հսկայիցն առաջնոց կանգնեալ, եւ կամ Եգիպտոսցոյն անհնթութ բրբ գունք մինչեւ ցայսօր ժամանակի դեռ յոտին կայեալք, եթէ ոչ զի ՚ի սոյն բնաւորական կրից շարժեալ և ըզմակերտեալ մարդկանն՝ նորիմբք զանձանց իւրեանց գուն գործեցին յաւերժացուցանել զյիշատակ դարուց ՚ի դարս:

Բեր այսպէս անցանել ընդ համօրէն պատմութիւնս զառաջնոց դարուցըն անցաւորաց, եւ ահա՛ սչ յայլ ուստեքէ լիցի մեզ երբէք տեսանել ինչ մի ՚ի հրաշակերտ յօրինուածոց

մարդկանն, կամ ՚ի սիրալի գործոցնոցին արութեանց, եթէ ոչ ՚ի սոյն աւանէ՛ աղբերէ յառաջ բղխեալ: Որ զի և կարի քաջագէտ իսկ առ տեղեաւս զանհամար Դիւցազնութեանց մերումնս աշխարհի ՚ի յուշ բերել տեսութիւնս առ գեղեցիկ ասոցացոյց նիւթոյ բանիս, այլ զի Սորէնեան քերթողաց պահեալ մնաց այն, և կամ Եղիշէից ումանց համեղարանից, շատ է մեղ պատուել զլուութիւն. քանզի եւ բանիս նորատակ ոչ յընդհանուրն անդ, եւ ՚ի յոյժ հեռաւորութեամբ անջատեալ սրն առ ՚ի մէնջ ձգտել պարասել, այլ որ ինչ ՚ի յետին ժամանակս և ՚ի մերում յայսմիկ քաղաքի եղեն յիշատակութեանց արժանի արարք և աղբս սիրական բարձրութեանց արգասիք, զայնս և եթ ՚ի մասնաւորի փոքրաբանել ջանալք, տալով ասպագայից ծանօթութիւն ինչ համառօտ, միանգամայն և խրախոյս յորդորատիպ առ նմանօրինական ժրանալ, և ՚ի տրիտուր գեղեցիկ վաստակոց և առաքինութեանց՝ զանմահ յիշատակութեան ըզմակերտել փասս:

Բայց որպէս զի մի առ կարի համառօտութեան և առ ամփոփ զիրան պահելոյ՝ երեւեսցուք զանց առնել և զյոյժ կարեւորօքն ՚ի զլսաւորութիւնս առաջադիր գործոյս, վասնորոյ և փոքրինչ ՚ի վերուստ առեալ զթել բանին՝ կալցուք նախ զիտել թէ՛ սուտ ուստեք եղեւ մեղ յայսոսիկ կողմանս եւ կաւորութիւնս, և կամ յորում ժամանակի և զի՛նչ ինչ ՚ի հնոց անտի առ մեզ կայցեն նշխարք յիշատակութեանց: Ապա և որ առ մերովս ժամանակօք գործեցան՝ յարեսցուք զինի, բովանդակեալ զամենայն յերկոսին մասուէն: Յառաջնութիւն ցուցանելով եթէ նախնիք մեր յրթոցս անդ մեռասաներորդ դարուն եկեալ իցեն յԱնույ և բնակեալ

(\*) Սոյն երկասիրութեան հեղինակն է Գաբրիել Գրիգոր Փոթիմանցի, արղւնաշատ և համբաւաւոր վարժապետ, որոյ անունն օրհնութեամբ կը յիշուի բոլոր Ռուսմեիոյ մէջ: Թէ՛ մեծանուն վարժապետի և թէ՛ իւր նկարագրած աղգային Բարեբարոց յիշատակն անեղծ պահպանելու և յետոց աւանդելու համար արժան կը դատուիք Ամապրոյս միջցաւ հրատարակել սոյն գրաւոր աշխատասիրութիւնն, որ օրինակուած է, ՚ի Փոթիման մեր հովուական այցելութեան ժամանակ, Հեղինակի արժանաւոր աշակերտ Տ. Պօղոս բարեկրօն քահանայ յի ինքնագիր օրինակն:

Մ. Վ. Մ.

յայտոսիկ կողմանս , թէպէտ և չիցեն թողեալ յիշատակութիւնս ինչ զայնր ժամանակի և զելութեանցն , և ոչ իսկ թէ ո՛ր ուրնք կատարէին հոգեւորական պաշտամունք նոցա , ըստ որում անազան ուրեմն տեսանին շինութիւնք Եկեղեցեաց յայտոսիկ վիճակս :

Իսկ յերկրորդումն առաջի արասցուք թէ որչափ ինչ 'ի սկզբնաւորութենէ դարուս մինչև 'ի ներկայիս գործեցան աստանօր յառաջատուութիւնք 'ի նիւթ ազգային շինուածոց , նորագութեան ասեմ սրբոց Եկեղեցեացն , և նոր 'ի նորոց շինութեանց ազգային Գպրոցացն . յաւելուածով յիշատակութեան յատուկ անուանց առաքինացելոցն 'ի ներկայիս առատանուէր տրովք առ մշտնջենաւոր հաստատութիւն զբրամագլխոց իրնք յանուն նորակաւոյց Գպրոցացն :

Մ Ա Ս Ն Ա .

Ապաքէն , որք միանգամ յակն զմերովք սրամութեամբք արկին , նոցա և յայտնի իսկ է բաղմադիմի հարստահարութեանցն տեսարան և աւեր աչխարհիս Հայոց . եւ մանուանդ բնիկ Հայրենւոյն մերոց Անի քաղաքի . որքան զամենայն առաւել քամեաց էարք զբաժակն բարկութեան զբաժակ սրամտութեան յերեսաց արտաքին և 'ի ներքին թշնամեաց յաւուրս Մանուխոսի կայսեր Յունաց իբր 'ի 1046 ա մին Քրիստոսի և յետ նորա յաւուրս Ալփաշանայ Պարսից արքայի , որ յաւրիւն ներկեաց զհրաշակնրան զայն եւ զմարդաշատ քաղաք , և որոց ճարակ ետ զբնակիչս նորուն : Ուստի և որք միանգամ մաղապուր զերժան յանօրէն երկաթայն տարադէմ գնացին փախըստեայք յայլ և այլ կողմանս աշխարհի .

և լին բնակութեամբ զահմանս օտար ազգաց :

Եւ ահա՛ զայսու ժամանակօք իբր 'ի 1060 թուականին Քրիստոսի , բազմութիւն Անեցւոց և շրջաբնակ ազգայնոց միաբանեալ նլին 'ի Հայաստանէ , և սկսան ուղեւորիլ դէպ 'ի Մուտաղիայ և 'ի Լեհաստան , որպէս հաւաստի ցուցանեն մեզ բանք Հայր Մինաս վարդապետի Բժշկեան 'ի գիրսն անուանեալ ձանադարհորդ-Յիւն 'ի Լեհաստան , ուր մանրամասնաբար պատմէ զամենայն անցիցն անցելոց Անւոց քաղաքի և ցրուելոց բնակչաց նորուն յայտոսիկ նահանգս :

Այլ աստ են տարակուսանաց իբր , զի բնաւ և ո՛չ 'ի միում 'ի քաղաքացս յայտցանէ Մուտաղիոց չգտանին հեաք ինչ հնութեան շինուածոց կամ Եկեղեցեաց Հայոց , որպէս և ոչ իսկ յիշատակարանաց անգամ , որ զայնր ժամանակին երեւեցուցեն զանցս և զելութեանցն հաւաստիս : Քանզի ըստուգապէս ասել մի միայն 'ի գրոց անտի Բժշկեանին է մեզ հմանալ զոյսմ ամենայնէ , որպէս նաեւ զհնութենէ Եկեղեցւոց քաղաքիս որ յանուն սուրբ Աստուածածնին , զորմէ ասէ լինել ամոց իբր հինգ հարիւրոց : Այլ թէ ուստ ուստեք առեալ իցէ նորա զայս ծանօթութիւն , չ'ունիմք ասել , զի և ո՛չ ինքն իսկ յայտ առնէ , թերեւս յաւանդութենէ և եթ լուեալ և կամ դուցէ լեալ յաւուրս նորա արձանագրութեան իրիք 'ի ժամանակաց անտի շինութեան , որ արդ չիք 'ի միջի : Քանզի որ այժմս կայ տակաւին յարտաքուստ Եկեղեցւոյն 'ի վերոց դրանն յարեւմտից կուսէ՝ ո՛չ վասն Եկեղեցւոյն ինչ , այլ վասն գաւթին շինութեան առնէ յիշատակութիւնս , որպէս տեսցի յօրինակէդ գաղափարելոց հարազատութեամբ :

« Երևեցաւ գաւիթս այս գովելի ՚ի ժամանակի Եկեղեցագանութեան Մահտեսի Օգոսնոտի, արգեամբք Պօթուշանու եղեալ ժողովրդեան, ՚ի թուին ՌՄԼԲին ու Իսկ. քան զայս հնագոյն ինչ չունինք բնաւ յանկեան ուրեք. ուստի և շինուած հնութեան Եկեղեցւոյն մընայ անբացայտոյ և միայն որչափ ինչ ՚ի յիշատակեալ գրոց անտի ցուցանի, զոր վերագոյնդ նշանակեցաք :

Եւ ՚ի լինիլ այսմ այսպէս, այնուհետեւ մնայ հաւատալ թէ հնագոյնն քան զամենայն Եկեղեցիս Հայոց Մողտաւիտայ, թերեւս և Վաղարիտայ և Պագովննայու, իցէ մերս այս եկեղեցի. զի որ յայլ և այլ քաղաքս գտանին վիճակացս, իմա ՚ի Եաշ, ՚ի Ռոման, ՚ի Ֆօքշան, և ՚ի Սուչավայ, միշտ խոնարհ են ժամանակաւ քան զսա, որպէս տեսանի ՚ի նմին գրուածի :

Եւ սակայն ՚ի նոյն իսկ ՚ի սրտամութենէ ուսաք լինիլ զբնակութիւն մերոյս յայտոսիկ կողմանս իբր ՚ի մէջն անգմետասաներորդ գարուն. և զիմքդ ապա մարթ էր նոցա գրեան զերկերիւր և աւելի ամս թարց Եկեղեցւոյ կեալ, ժողովուրդ՝ որ քան զկեանս անգամ զիրօնիցն նախամեծար համարէր պաշտամուսնս. ժողովուրդ ասեմ Անււյ. քաղաքի, որ ելից առ հասարակ զամենայն վայրս Եիրակայ հոյակաս շինուածովք տաճարոց և վանօրէից. և ապա ընդ այնչափ ժամանակս կալ մնալ աստանօր անմասն յեկեղեցական պաշտամանց և ըստ գրելոյն՝ ՚ի Բարբլունի հնոց ժողովրդեանն ՚ի մէջ ուռեաց կախել ըզՎոսիսարանս Աստուծոյ մերոյ՝ զիմքդ հնարաւոր :

Բայց կապի որ որպէս և սխորձէ, ըստ որում քողարկեալ գտանի այս ՚ի ճշմարիտ տեսութենէ առ ՚ի չգոյէ հաւատտի սարացուցութեանց :

Այլ ըստ իս անձին առանձինն

գժուարին է արդարև հաւատալ է է յնթադրու երկերիւր ամաց թարց եկեղեցւոյ կեցեալ իցէ նոցա, սովորելոյն յաճախութեամբ վանօրէից և հոյակատ տաճարաց, բայց յայմէ կողմանէ, քանզի չիք ինչ ՚ի յիշատակութեանց որ լուսաւորալոյն զերան առաջի կացուցէ, մնայ իւրաքանչիւրոյն ՚ի կամրս ապաստան հաւան լինել կամ ոչ իմոցս այս կարծեաց. զի և ոչ իսկ յայն ձգտիմ բանիւս հաւատարիմ զոյն գործելոյ ընթերցանելեացն, նա թէ և ստղարեղ իսկ կարգամ քննութեամբ ՚ի վերոյ կալ և ստուգել եթէ ո՞ր արդեօք առաջինն այն առ ՚ի նախնեացն մերոց կանգնեալ եկեղեցի, և յորում ժամանակի, և կամ ո՞ք ոմանք նորա երախտաւորք և բարեացապարտք. զի այս ամենայն կարեւոր հանգամանք և ծանօթութիւնք սեպհականք համարին յիշատակարանաց որ և իցէ եկեղեցւոյ, որպէս և առ հինան եկեղեցւոյ է տեսանել, զի անուանք իւրաքանչիւր երախտաւորաց և մանաւանդ շինողաց զեկեղեցիս առ յիշատակէ գրեալ պահէին ՚ի մատեան ինչ, որ Յաւնարէն ձայնիւ կոչէր Տիփփիան, եւ ըստ մեզ Բնագիրք կամ Յիշագրութեան Եկեղեցւոյ, որպէս տեսանի առ որբոյն Ներսիսի Լամբրոնացւոյն, և մեծին Թոսրովու Անձեւացեաց եպիսկոպոսի :

Էր ապա և մերքս ոչ զայն պահեցին շաւիղ, չգիտեմ : Այլ մերս իմա ինձ աստանօր զնախնիս եկեալս Անււյ, և բնակացեալս աստէն, որոց անկ էր արդարեւ թողուլ ձգել յետնոցն գէթ համառօտիւ յիշատակութիւնս ինչ զանհրամեշտ կարեւորաց ՚ի գիտութիւն, յորոց և մեր լուսաբանեալ բաւեալ շարունակութեան պարասպ տող, և իբրեւ ՚ի հիման վերայ զմերոյ ժամանակի զարարն յոգել յաւելուլ :

Այլ ասիցէ որ, թերեւս և սրտ

րեալ իցէ նոցա զայսպիսեաց յիշատա-  
կութիւնս և ՚ի գիր արձանացուցեալ,  
բայց ժամանակն ծախեալ սպառեալ  
իցէ զայնս :

Ազգայնէն և ինձ իսկ հաւանական  
և զլսովնն ախորժելի ՚ի գեղեցիկ կող-  
մնն անդր յանկուցանել զկարծիազ ժա-  
մանակին դնելով մեզս , որ գիտէն զա-  
մենայն վասնել . եթէ ոչ վաղ ուրեմն  
՚ի Մերունեոյն Խորնոյ լուծեալ գտանէր  
այս ՚ի նմանօրինակ դէսս ինչ ՚ի գիրսն ,  
որ առ Սահակ Բագրատունի : Ուր յետ  
ցուցանելոյ թէ քանի գժուարութիւն  
էր ինքեան ընուլ զանգիր ազգասիրին  
այնորիկ Իջևանի և ՚ի վէպ հանել զոր  
՚ի սկզբաննէ անտի եղեն առ հինան Հա-  
յաստանեաց քաջութեան արարք եւ  
գրոց յիշատակի արժանիք , յարէ տարս  
և զվասն էրն . առ ՚ի չգոյէ , ասէ , յաղ-  
գի մերում և ոչ մի ինչ ՚ի յիշատակա-  
րանաց , զև և ոչ մի որ պէտ յանձին  
կալաւ մատենագրել զայնցանէ , և ա-  
հա ըստ այսմ և զմերոցս իմաստասի-  
րել թերեւս ոչ ինչ տարադէպ , մանա-  
ւանդ թէ և կարի քաջադէպ :

Մի ապա սագիւտ ինչ արկցի զեր-  
կասիրութեամբս այսուիկ փոքու , իր-  
րեւ որ չունիցի յինքեան զառ ՚ի վա-  
ղնուց տեղեկութիւնն , ըստ որում ,  
որպէս տեսաւ ՚ի վերոյ , համայն ան-  
յայտութեամբ գտանին վարագուր-  
եալք . մատիցուք ուրեմն որ յառաջի-  
կայս նիւթ , սկիզբն առնելով երկրոր-  
դի մասին :

Մ Ա Ս Ն Բ .

Զի՞նչ հաւատարմագոյն արդեօք  
և ճշմարտասիր պանից տեսութիւնք ,  
քան որ ինչ յականատեսն շինութենէ  
յառաջ բերեալ մատուցին . եւ ա-  
հա յերկրորդում յայսմիկ մասին ոչ

եւս կարծ ՚ի կարծ բանից , և ոչ որ ՚ի  
լլոյ եւ եթ զըուցաց յառաջ բերու-  
թիւնք , այլ որոց մեզն իսկ եղեաք ա-  
կանատես եւ կամ յականատես ան-  
ձանց՝ առ պատշաճ յօդուորութեան  
գործոյս քաղեցան ծանօթութիւնք ,  
զնտին և հաղորդել կայ մեզ զինի եկե-  
լոցն , երկուս առնելով ամս յօդուածս ,  
զմին վասն եկեղեցեաց նորոգութեան  
առանձինն և զմիւսն վասն նորակառոյց  
շինութեան դպրոցացն :

ՅՕԴՈՒԱԾ Ա .

Որ ինչ միանգամ զառաջին շինու-  
թենէ Եկեղեցւոյ Ս . Աստուածածնի  
էին բանք , և զնորոյն հնութենէ հա-  
ւանական կամ ոչ , հասուցաք արդէն  
յառաջին մասի անդ , զհետ երթեալ  
ծանօթութեանցն զառ ՚ի հօրէն Մի-  
նտայ ընկալելոյ . զարդիս մնաց միմի-  
այն զվերստին նորոգութեանց նորին ,  
և զերախտաւորացն առ նմին վաստա-  
կաւորութենէ յառաջ բերել բան :  
Բայց և յայն չև ձեռն մխեալ՝ աստու-  
ցուք համառօտիւ նախ վասն կառուց-  
ման միւս քաղաքիս , որ յանուն Ամե-  
նասուրբ Երրորդութեան , որպէս զև  
կարգաւ յառաջ մատուցին ամենայն  
բանք արդեան շինուածոցս , որք առ-  
հասարակ զառաքինութեան Ազգին  
վերաքարոզեն զհանդէս :

Արդ՝ իբրեւ հետզհետէ բազմա-  
նայր Ազգ մեր ՚ի քաղաքիս , և անբա-  
ւական լինէր հին եկեղեցի սուրբ Սա-  
ստուածածնին յիւրում՝ ծոցի կրել զըա-  
րեպաշտիկ հաւատացելոցն յորդու-  
թիւն , այնուհետեւ այր իւրաքանչիւր  
շարժեալ ոգւով աստուածաբաշտու-  
թեան՝ եռայր յանձին տեսանել կան-  
գուն միւս եւս եկեղեցի :

Ուստի իբր յաւարտ ութ և տասն-  
երորդ գարուն , մի ոմն յականաւոր

իշխանաց աղբիս Ա՛տոն անուն, ՚ի զարմէ Խէռլեան, այր երեւելի և ազնուատոհմ, և յորդիւնս ընչից զբազմօր գերազանցեալ, յանձն էառ առատաձեռնել որ ինչ ՚ի շինուած այնր եկեղեցւոյ սրահանջէին ծախք . յաւել ՚ի վերայ զի և անձնիւր հաւատացեալ ոչ զւսցաւ իւր սխանն նուէրս ինչ մասնաւորս յիւրոց արգեանց ընծայել, առ բաժանակից եւ հազարդ լինելոյ վարձուցն անմահականաց : Եւ այնպէս ձեռն ՚ի գործ արարեալ կանգնեցաւ նոյն Եկեղեցի յանուն սրբոյն Օգսենտիոսի վկային, զորմէ եւ ականաւ տեսքն ՚ի ճերուհեաց պատմեն թէ ՚ի ժամանակս շինութեան նորս այս եկեղեցւոյ, տակաւին նշմարէին անդանօր աւերակք ինչ հնութեան այնր վաղէմի եկեղեցւոյ :

Թերեւս և յայս իսկ ակնարկեցին բանք նորին իսկ Բժշկեան Հօրն ՚ի ձա նապարհորդութեան անդ, ուր յետ ասելոյ զեկեղեցեաց մերոց լինիլ երկուս և ցուցանելոյ թէ երկրորդս այս է նորաչէն, յարէ անմիջապէս թէ՛ « Աստանօր երեւին աւերակք հին շինուածոց » :

Այլ որ առաւել եւս հաւանական գործէ մեզ զայս, է յիշատակարանն՝ որ ՚ի ներքոյ խաչադրոջմ երկուց մարմարինաց զետեղելոց առ երկոքումք գրամբք եկեղեցւոյն, որ այսպիսի յիշատակութիւնս առնէ :

« Յիշատակ է Թաշ՝ Բոտացի տիրացու Թաշերեանց Յարութիւնի որդի Պետրոսին և իւր համայն կենդանեաց և ննջեցելոցն, որ ՚ի դուռն Փօթիշանու նորաչէն Ս. Օգսենտի անուամբ կառուցեալ եկեղեցւոյն, թուին ՌՁՂԵ » :

Ուր որպէս տեսանի, յիշատակաւ տու սոյն խաչադրոջմ քարանց՝ առանց ինչ միտ դնելոյ նորոգ անուան Եկեղեցւոյն, որ է Երրորդութիւն, ընդ հը

նոյն շփոթեալ ասէ լինել անուամբ սրբոյն Օգսենտի կառուցեալ :

Բայց զայսպիսեաց աստի ոչ եւս փոյթ է մեզ բանս լայնել երկայնել, զի եւ արդէն իսկ ՚ի սկզբան մասինս խոստացաք չը մխել այլ եւս ՚ի զրոյցս զորոց չունիցիմք հաստատուն ապացոյցս : Այլ ՚ի կարգ բանիս եկեալ՝ բերեմք ՚ի վերայ թէ՛ սոյն այս եկեղեցի, որպէս և հղովք ՚ի զարգուց նորա մեծագոյն մասամբ, կամ լաւ եւս է աւել, իբրու առանձին ինչ գործ համարի առնն յիշատակելոյ, ազնուականի և ազգասիրի և անմահական փառօք պսակողի զանուն և զճեռ իւրումն ալ գատոհմի . յորոյ ապացոյց յարեմք աստէն և զօրինակ յիշատակարանին փորագրելոյ ՚ի վերայ մարմարինի, և զետեղելոյ ՚ի վերայ միջնադրանն ՚ի հարաւոյ կուսէ, որ հայի ՚ի գաւիթ եկեղեցւոյն :

« Հիմնարկեցաւ խաչապսակ սուրբ Եկեղեցիս ՚ի քաղաքն Փօթուշան, յանուն Ամենասուրբ Երրորդութեան, արդեամբ Մահատեի Օգսենտի, ՚ի ժամանակս Հայրապետութեան ամենայն Հայոց Տ. Ղուկասու Սրբազան Կաթողիկոսին, աշխատանօք և վերակացութեամբ Տէր Մելքսնին Գրեշու Պուճատեանց Բօմանցի, եւ յիշատակ լինի եօթն նախնեացն այս սուրբ Եկեղեցիս : 1795. Սեպտեմբեր 1 » :

Այլ աստանօր թերեւս սպասեցէ որ ըստ կարգի և ժամանակի շինուածոցն բանս ինչ լսել և յազազս բարձրաբերձ ամբարտակի զանգակտանն, որ յետ ոչ բազմաց զինի շինութեան Եկեղեցւոյն՝ ամբաւութեամբ ծախուց կառուցաւ կանգնեցաւ փոքր ինչ տարակայութեամբ առ նմին :

Բայց մի՛, աղաչեմ՝ զի մեր յանձին կալեալ է զայնց և եթ շինութեանց բթեցուցանել զգրիչ, որք զառարինաւ

սէր բերմանց ազգին, միանգամայն և զնահախան նորոտակին քարոզէն զհանդէս, իսկ յորս ընդհակառակն ինչ 'ի վեր երեւեցցի բան զնոցանէ մեծազգուշութեամբ 'ի վարչամակ լուծեան քաղել ամիսովել :

Քանզի զինչ բնաւ երբէք 'ի պարճանաց և և յառաքինութեան մասին գրեցցի սա, յորժամ նշմարեցցէ որ զայնր ժամանակի դարոցայցն զանչբութիւն, և եկեալ 'ի միտս հարցանիցէ թէ էր ազագաւ այնչափ ծախուց վարպար վաանու մն 'ի պէտս զանգաւաց, սրպէս թէ անհրաժեշտ հարկ 'ի վերայ կայր 'ի հոյակապ տեղոջ զնոտա զետեղել, իսկ որ ինչ առ բարեկրթութիւն մանկանցն էր, և ոչ գէթ կիսովչափ փոյթ 'ի մէջ բերնէ : Այլ եթէ չիցէ յանդգնութիւն ասել, իբրու 'ի հիւզս ինչ մրգապահաց 'ի մէջ սեխենեաց զնոտա տաղաւարել :

Համայն և այնպէս, ոչ եթէ նախատինս ինչ փաստակաւորացն այնոցիկ զնել ժպրհիմք, այլ զանպտուղ երկասիրութիւն նոցա գովել ևս չառնումք յանձն, թողալ այլոց աստարէզ, զի մի զնաւն մեք ինքնին երեւեցուք գրաւեալ :

Հասցա կայցէ այն յիւրում տեղոջ և մեք փոյթ կայցուք անցանել 'ի նըպատակ առաջագրութեանս, այն է 'ի նորոգութիւնս կարեւորագունիցն շինուածոց, յոր 'ի սկզբանէ անտի ուղղեալս եմք :

Եւ արդ ըստ ասացելումն, որ հընսնայն և ճերանայ մերձ յապահանութիւն, ոչ ինչ հանդէպ օրինակէս էր տեսանել և զմերս այս եկեղեցի սուրբ Աստուածածնին, որ 'ի հոլովմանէ այնչափ կարեւոր ամաց ասպահանութեան տուեալ տեղի ոչ եւս բաւէր այնուհետեւ զտիպ բերել փայելութեան զԱստուծոյ Տաճարի, ուստի և կարգ

յոյժ անպտանէ այլ եւս մնալ 'ի հնոյն վիճակի նսեմաստուեր անչբութեան 'ի լուսաւորեալ յայսմիկ դարուս : Այն զի և գէղարդոյ պոյցածութիւն շինուածոց Երզրոյութեան Եկեղեցւոյն ոչ փոքր ինչ նախանձուկս բերէր ժողովրդեանն Աստուծոյ, վասն որոյ այր իւրաքանչիւր փութայր ճնշեցր 'ի նուրոգութիւն սորին, Բայց պարագայիւք ինչ ոչ ներելով 'ի գործ անդր մխել բողբոմ անգամ ընկեր սոցա զպատրաստութեամբ գալ, և 'ի զանազան խոչընդակ սց արգելու կատիլ, մինչեւ ջամ Տեառն 1826, յորում ժամանակի բարեբախտութեամբ իմն դիպեալ աստանօր Սրբոյ Աթոռոյն Երուսաղէմի բաղմարդին Նուիրակ Մարկոս Մայրազոյն վարդապետն Փօթիշանցի, ընդ իւր հագեծին սրգւոյ Գէորգ վարդապետի Ռօմանցւոյ, և ճանուցեալ զաստուածահաճոյ միտս ժողովրդեանն, բուռն եհար յորդորել և քաջաբերել զնոտա չըլքանիլ երբէք յակնկալութենէ յաջողուածոյն :

Ուստի այր իւրաքանչիւր ձեռն բղմիջովք պնդեալ և գօտեւորեալ փութացաւ իւրովսանն կցորդ լինել յառաջատուութիւն գործոյն եւ առ 'ի գործագրել զիրան հաճութեամբ հասարակաց ընտրեցաւ 'ի գործակատար վերատեսչութեւ առաքինազարդն յիշխանս Ստեփան Բիզար Կոյլաւեան, որդի Կոյլաւեան Գաւթի, որ հանգունատիպ հնոյն Զօրաբաբէլի ժրացաւ յառաջ վարեցաւ յայս բարեպաշտիկ գործ, զոր և քրտամք չափ և արեամբ պահազարդեաց 'ի գլուխ տարաւ սաւտարութեամբ նուիրանաց համօրէն ժողովրդեանն մեծի և փոքու իւրաքանչիւր ըստ իւրում կարի, որպէս և բան յիշատակարանին զետեղելոյ յարտաքուստ 'ի ճակատ գաւթին յայտ առնէ, ունելով օրինակ բանի զայս :

« Սուրբ Աստուածածնի Տաճարս, որ իբր երեք հարիւր ամօք յառաջ շինեալ էր ամենակարողութեամբն Աստուծոյ, այժմ նորոգեցաւ բայ ՚ի յորմոց գմբէթայարկ կաթուղիկէիւ եւ զանգակատամբ արդեամբ Փօթիշանու Աղաչայ իշխանապետաց եւ իշխանաց եւ համայն ժողովոցոց, բաղմարդիւն վերակացութեամբ Կոյլաւեան Աղաչայ Ստեփանի : 1826 . Յունիս 21 » :

Իսկ ապա որ առանձինն ՚ի շինուած աւագ խորանի Եկեղեցւոյն առատաձեռնեաց հանդերձ փորածոյ խաչկարուն եւ ոսկեղոծ նկարուք՝ եղև Խաչակ իշխանն ՚ի զարմէ Պօթիշուեան առ ՚ի յիշատակ համբռն իւրումն ազգատոհմի :

Ըստ այսմ եւ աւանդատուն որբոյ Եկեղեցւոյս է յատուկ իմն գործ յիշատակի ոմանոց բարեպաշտօն անձանց, որոց անուանք յայտնի կան ՚ի յիշատակարանի անդ զետեղելոյ ՚ի ներքնակողմին աւանդատանն, եւ է ըստ օրինակիս ըստ այսմիկ . « Յիշատակ է նորաչն աւանդատունս խորանաւ եւ խաչապսակ գմբէթիւ Տերտերեանոց Յովհաննէսեան Աղաչայ Խաչերեօֆն եւ եղբարցն, նաեւ Խաչիկեան Աղաչայ Սարգսին, եւս Զատիկեան Աղաչայ Տանիկին, եւ համայն կենդանեաց եւ ննջեցելոց սոցա : 1826 » :

Արդ՝ իբրև այս ամենայն վայելչաշուք պայծառութեամբ ՚ի գլուխ ել, եւ ներքին եւ արտաքին զարգուքն պակեցաւ գերազանց գտեալ բազում առաւելութեամբ քան զմիւս Եկեղեցի Ս. Երրորդութեան, այնուհետև այլ իմն գեղեցիկ նախանձաւորութիւն յուղէր ՚ի սիրտ բարեպաշտիկ ժողովրդեանն, այն է ՚ի հաւատարութիւն ամել կացուցանել զյօրինուած երկուց սրբոց Եկեղեցեացն, եւ համեմատ չափ սկզբութեամբ յարդարել զնոս, զի մի

ինչ այլատարազ մին ՚ի միւսսէն երեւեացի, եւ կամ առաւելութիւն արտաքնայարգար զարգու շինուածոյ միոյն՝ զմիւսոյն աղօրացուսցէ զտեօիլ եւ զուրք :

Վասն որոյ յամին 1832 նոյն իշխանապետք ազգիս եւ գրեւ նոյն ժողովուրդ կրկին անգամ ՚ի բարեպաշտութիւն շարժեալ եւ նուէրս ինքնայօժար տրոց առատաձեռնեալ իւրաքանչիւր ըստ բաւականի իւրում, կազմեցին կացուցին գումար ինչ հաւաքածոյ արդեանց բաւական ՚ի սպասահարկութիւն ծախուցն կարեւորաց, որով նորոգեցաւ նոյն եկեղեցի կրկնագմբէթ եւ գեղեցկադիր յաւելեալ առ երի յաջակողմն կոյս եւ աւանդատուն ինչ վայելչադիր, յորում եւ առանձինն կանգնեցաւ խորան գեղայօրէն զարգու ՚ի յիշատակ Կոյլաւեան բուն Տոհմին արդեամբք Լուսիկ իշխանի Կոյլաւեան եւ իւրումն ամուսնոյ Մարիամ տիկնոջ, որ ՚ի զարմէն Խէսուլեան :


Սոյնպէս եւ դաւիթ Եկեղեցւոյս, որ յառաջն էր կարի փոքրադիր, ընդարձակեցաւ վայելուչ համեմատութեամբ եւ իբրու նոր ՚ի նորոյ շինեցաւ արդեամբ ժողովրդեանն, յորում եւ գեղեցկազարդ խորան եւ խաչկալ կանգնեցաւ մեծադոյն մատամբ ծախուց բարեպաշտօն Մարեան եղբարց : Եւ որպէս զի յանուանէ ծանկոյն սկզբնապատճառ բարեպաշտարարն եւ երախտաւորքն նորոգութեան շինուածոյ Սրբոց Եկեղեցւոյս, յարեմք աստէն զհարազատ օրինակ յիշատակարանին, որ յարտաքուստ ՚ի վերոյ գրանն յարեւմտից կուսէ կայ գնտեղեալ :

« 1832 . Մայիս 16 : Երրորդեցաւ Սուրբ Երրորդութեան Եկեղեցիս բազմաման աշխատատիրութեամբ Կոյլաւեանց Ա . Դաւիթ որդւոյ Ա . Ստե

փանին արդեամբք քաղաքիս Հայկա-  
ղուն ժողովրդեան 'ի յիշատակութիւն  
համայն կենդանեաց և ննջեցելոցն , նա  
եւս և բարեջան աշխատակցութեամբ  
Ծօբշանցի Ա. Աւետիքի , Զատիկեան  
Ա. Տօնիկի . Պօթիշան ր :

Այսպէս ահա ազգասիրական ող-  
ւով և աստուածպաշտութեամբ առ-  
ջեալ ի շնանք և ժողովուրդք քաղաքիս՝  
յաւարտ յանկուցին զպայծառութիւն  
երկուց սրբոց Եկեղեցեացս , որ ցայսօր  
եւս կան 'ի նմին պայծառութեան ,  
զորս եւ անասանելի պահեցեցէ Տէր  
Աստուած ըստ աւուրց երկնից մինչեւ  
ց յաւիտեան , յանմահ յիշատակու-  
թիւն Երաստաւորաց նոցին և Բարե-  
բարաց , զորոց եւ մեր հատուցեալ  
որ ինչ 'ի պատշաճաւոր գիտելեաց ,  
անյանեմք յառաջ 'ի շինութիւն Գլխ-  
բոցայն :

(Շարունակելէ :)



Թի ՄԻՆՁԵԻ Ո՞Ր ԱՍՏԻՃԱՆ

ՆԱԽԱՆՁՆ ԿԸ ԿՈՒՐԱՑՆԷ ԶՄԱՐԴՆ

ՆԱԽԱՆՁՆ՝ ինչ ընտանեաց , ըն-  
կերութեանց եւ ազգաց մէջ տեղի  
գտնելով որջանայ , կը թուեաւորէ  
ընտանեկան կեանքն ու կենցաղավա-  
րութիւնն , կը տապալէ ընկերականու-  
թեան հիմնաքարն և վեր 'ի վայր կը  
յեղաչըջէ ազգայնութեան միացուցիչ  
ամրապինդ կապն և քաղաքական ու  
բարոյական կեանքն ու ոգին : Քանզի  
երբ բանականութեան արեգակն չար  
նախանձու մառախլապատ ամպովք  
նսեմանայ , երբ մոռաց գազաթման  
բարձր հարկոցն կրից թանձրամսձ

ժ

միգովք մթազնի , այնուհետեւ նա  
խանձոտ անձանց աչաց թիւրացոյց  
գիտակով ամենայն առաքինութիւնք՝  
վատ մնլութիւնք կ'երեւին , ճշմար-  
տութիւնն՝ ստութիւն , արդարութիւ-  
նըն՝ անիրաւութիւն , ուղղութիւնն՝  
ճռութիւն և անձնուիրութիւնն՝ շա-  
հասիրութիւն :

Կուզես ընտիր յատկութեամբ և  
հազուադիւտ ձիրքով Յովսէփ Գեղե-  
ցիկ եղիւր ընտանեացդ մէջ , սակայն  
կը տեսնես , որ շուտով եղբարցդ ա-  
չաց փուշ կը լինիս , քո կեանքն նոցա  
համար մահ է , քո շնչառութիւնն՝ հը-  
րեղէն կրակ , և ներկայութիւնդ ժան-  
տախտ , զքեզ կորուսանելու հնարք  
կը խորհին և թշուառութեան Եգիպ-  
տոսն կ'իջեցնեն եւ անտի 'ի բանսն  
զրպարտութեան :

Կուզես ազգականացդ ազատու-  
թեան , յառաջադիմութեան և եր-  
ջանկութեան համար ամեն ջանք եւ  
զօրութիւնք 'ի գործ դիր , Մովսէս  
մարգարէին նման՝ գիտութեան գաւ-  
ւադանաւ տգիտութեան ճոշն պա-  
տառէ , ժողովուրդն մեղաց Փարաւոնի  
ծառայութենէն և մոլութեան Եգիպ-  
տոսէն ազատելով աւետեաց , լուսոյ  
և գիտութեան երկիրն առաջնորդէ ,  
կուրութեան անապատին մէջ ապա-  
ռաժացեալ սրտերէ գիտութեան աղ-  
բիւրներ բղխեցնուր և նորօք իմաստու-  
թեան տապով պապակեալ հոգիքն  
արբուցանելով զովացնուր , երկնային  
մանանայիւ կերակրէ , երկու քառա-  
սուն օրեր անօթի և ծարաւ մնալով  
աշխատութեան լեռոն ելիր , և նոցա  
վարուց բարուց ուղղութեան և քա-  
ղաքական և ընտանեկան կենաց կա-  
նոնաւորութեան համար՝ կարգաց և  
կանոնաց տախտակներ գրէ , եւ վեր-  
ջապէս ազգիդ երկայնակեցութեան  
և յամայր երջանկութեան համար ըզ